

*Ani: World Architectural Heritage of a Medieval Armenian Capital*, edited by S. Peter Cowe. University of Pennsylvania Armenian Texts and Studies, 16. Leuven and Sterling, Virginia: Peeters, 2001. xviii+161 p.

Գիրքն ամփոփում է 1989ի Հոկտեմբերի 21ին Նիւ Եորքի Պատմական ՀՃ-կերտքիմում հրատարակած գիտաժողովի նիւթերը, որոնք նուիրուած են Աճիի կաթողիկէ եկեղեցու հիմնադրման հազարամեայ յորելեանին: Գիտաժողովի կազմակերպիչն է եղել Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ամերիկայի Միացեալ Նահանգների (ԱՄՆ) Արեւելեան թեմի առաջնորդ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը, որը յայտնի է հայագիտական բազմաթիւ նախաձեռնութիւններով: Տասներեք տարի առաջ ձեռնարկուած այս միջոցառումը աննախադէպ է եղել իր տեսակի մէջ, քանի որ 1921ին մի կողմից Խորհրդային Հայաստանի, Վրաստանի եւ Աղբրեջանի եւ միւս կողմից քննադական Թուրքիայի միջեւ կնքուած Կարսի պայմանագրից յետոյ, երբ Աճիին պաշտօնապէս ճանաչուեց իբրեւ Թուրքիայի տարածք, քաղաքը դարձաւ էր հնագիտական հետախուզումների վայր լինելուց եւ կարծես միտումնաւոր կերպով կտրուել էր քաղաքակիրթ աշխարհից՝:

Իհարկէ արժէ մատնանշել, որ 1989ից մինչեւ այսօր յիշեալ բնագաւառի ուսումնասիրութեան գործում տեղի են ունեցել էական տեղաշարժեր: Նոյն բուականին, ֆրանսիացի մասնագետների հետ համատեղ, Թուրքիայում սկսուել են հնագիտական պեղումներ: 1990ին ԱՄՆում լոյս տեսնող *Արմենիոն Ռիվիւ* պարբերականը իր չորրորդ համարը նուիրել է Աճիի կաթողիկէին: 1997ին հրատարակ է բարձրացել Կարեն Մարտոսեանի *Աճի. Եկեղեցական Կեանքը եւ Չեռագրական Ժառանգութիւնը* (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997) մեծագրութիւնը, իսկ 2001ի Փետրուար-Մայիս ամիսներին Փարիզի քաղաքապետարանի հովանաւորութեամբ բացուել է «Աճի. Հայաստանի Մայրաքաղաքը 1000 Թուականին» ցուցահանդէսը, որի քարտացուցակ-կատալոգը Նուրարեան Գրադարանի տնօրէն Յարութիւն Ռայմոնդ Գեորգեանի ջանքերով վերածուել է Աճիի պատմութեան եւ արուեստի մի ճաշակատր եւ գոլտրիկ շտեմարանի՝:

Աշճեան Սրբազանի 1989ի օգտաշատ ձեռնարկը իր հիմնական բովանդակութեամբ հայագետի գրասեղանին է դրում միայն տասներեքամեայ մտացութիւնից յետոյ: Գրքի խմբագիր, ներկայումս Լոս Անջելէսի Համալսարանի պրոֆեսոր Պիտեր Բաուին արել է հնարատրը գիրքն աւելի ամբողջական դարձնելու համար: Գրքում տեղ չի գտել միայն Աղբիանօ Ալպագօ Նովելլոյի «Միջնադարեան Տաճարները եւ Աճիի Կաթողիկէ Եկեղեցին» վերնագրով զեկուցումը, որը փոխարինուել է Ալվիոյա Միրզոյեանի յօդուածով, որին անդրադառնալու ենք մերքեւում: Քառօրէն ակնարկներով յիշելով անցած տասներեք տարիների ընթացքում ի Տըր հեռացած գիտաժողովի մասնակիցներ Պաօլօ Կունտոյի, Թաքիլ Յակոբեանի, Վազգէն Բարսեղեանի եւ Արմէն Զարեանի անունները, ժողովածուն էլ նուիրել է նրանց յիշատակին: Բացի հրատարակչի առաջարկից, խմբագիրը դրել է մաշտոցեան աթուրէնի իր օգտագործած գրադարձութեան բանալին՝, գրքում լոյս ընծայուած շուրջ 47 պատկերների ցանկը, 11 զեկուցում-հետազօտութիւն՝ անգլերէնով եւ ֆրանսերէնով: Խմբագիրը բուն գիտաժողովի

նիքերին կցել է յաւելում, ուր ներառել է Եւրոպայի Խորհրդի Ստրասբուրգում 1990ի Ապրիլի 12-14ը տեղի ունեցած «Հայոց ճարտարապետական Ժառանգութեան Հովանաւորութեանը» նուիրուած նիստերի ընդունած վերջնական քանակական կենսագրութիւնները, կազմել օգտագործուած գրականութեան մատենագիտութիւնը, անձնանունների, տեղանունների և առարկայական ցանկերը: Մատենագիտութիւնը, սակայն, կազմուած է անխմամբ: Օրինակ, Գարեգին Կարողիկոս Յովսէփեանի յօդուածները յայտնուել են գրադարձուած երկու տարբեր անունների՝ Hovsep'yanի և Yovsep'eanի տակ, իսկ Երեւանում հրատարակուած *Դիան Հայ Վիճագրութեան* շարքի առաջին հինգ հատորների խմբագիր է համարուած Յովսէփ Օրբելին, երբ վերջինս կազմել է միայն *Դիանի* առաջին հատորը, իսկ առաջին հինգ հատորների խմբագիրն է Սեդրակ Բարխուդարեանը:

Ջեկուցումների հեղինակներն յաճախ իրենց գրածը փաստարկում են նաեւ դիպակտիկ նիւթերով, լուսանկարներով և ճարտարապետական յուշարձանների յափազգութիւններով, որոնց հիմնական մասը վերատուգութիւններ են: Այս կապակցութեանը, արժէր միշտ մատնացոյց անել ընդօրինակութեանը նախատիպ դարձած հրատարակութիւնները:

Առաջարանում, Քաւին վարձել է բնորոշել Անիի տեղը հայկական միջնադարեան և արդի հասարակ-քաղաքական և գեղարուեստական մտածողութեան մէջ, անդրադարձել Անի պատմա-մշակութային երևոյթի տարրեր դրսևորումներին:

Լիւսի Տէր Մանուէլեանը (Թաֆց Համալսարան) իր «Անի. Հայաստանի Առասպելական Մայրաքաղաքը» զեկուցման մէջ Անին դիտել է իրրեւ առասպելական մայրաքաղաք, մեծ տեղ յատկացնելով քրիտանացի հեղինակ Լորդ Պատրիկ Քինտոսի (մ. 1976) և Նկարիչ Արշակ Ֆէրվանեանի (1866-1947) ճանրողական խոհերին: Տէր Մանուէլեանն ընդգծում է Անիի միջազգային նշանակութիւնը, դերը Չինաստան-Եւրոպա առնտրական ճանապարհի վրայ. այնտեղ դարերի ընթացքում տեղի հայկական մշակոյթի ֆոնի վրայ խաչաձեւուել են բիզանդական, պարսկական, արաբական, սելջուկեան, վրացական, օսմանեան և ռուսական մշակոյթները: Քաղաքի պատմութեան հերոսական զօները, ըստ Տէր Մանուէլեանի, առաւել քացայայտուել են Բագրատունեաց դարաշրջանում, որի օրինակն է Անիի կարողիկէի շինարարութիւնը 989ին: Հեղինակն ափսոսում է, որ պատմութեանը և ճարտարապետական յուշարձաններով այդքան հարուստ և եւրոպական միջնադարեան ճարտարապետութեան վրայ իր ազդեցութիւնը բողած քաղաքը քիչ է յայտնի ամերիկեան համալսարանների արուեստի տեսարաններին: Քաղաքի պատմութեան կարճ ակնարկից յետոյ՝, հեղինակն ընդգծում է քաղաքի քազմարճոյք ճարտարապետական կառուցուածքը և յատկապէս պաշտպանական սիստեմը, որն աղերսներ ունի կիլիկեան հայկական անրոցաշինութեան ստանդների հետ:

Երեւանի Պետական Համալսարանի դասախօս Թաքիկ Յակոբեանի «Անի. Ոնիական Դարերի Միջոյն» զեկուցումը նուիրուած է Անի մայրաքաղաքի պատմութեանը: Հեղինակն հաւատում է, որ այն բնակավայր է եղել սկսած Նոր Քարէ Դարից: Պեղումների ընթացքում յայտնաբերուել են կիլիկեան շի-

նութիւններ, սալաշար դամբարաններ, բրոնզէ ապարանջան, հելլենիստական դրամներ են: Աղջկարեւոյում գտնուել է հեթանոսական ամրոց եւ տաճար: Նախաքրիստոնէական այս գտածոների համար Մատր թանգարանում առանձնացրել էր յատուկ բաժին: Դ. դարում քաղաքն անցնում է Կամսարականներին եւ արդէն նրա մասին Ե. դարում յիշատակում են պատմիչներ Եղիշէն ու Ղազար Փարպեցին: Ը. դարում ամրոցն անցնում է Բագրատունիներին: Հեղինակն, համարելով Մատի պեղումների նիւթերը պատմական սկզբնաղբիւրների հետ, անդրադառնում է քաղաքի զարգացման հիմնական փուլերին, ներառելով մոնղոլական ռազմարշաների դարաշրջանը, յիշատակելով քաղաք ներխուժած նուաճողներին: 1988ի Սպիտակի երկրաշարժի ֆոնի վրայ ցոյց է տալիս քաղաքի ամրացման կարեւորութիւնը:

Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Գարրիելյա Ուլտիոջեանը, «Անիի Եկեղեցիները Ըստ Վիճական Արձանագրութիւնների Վկայութիւնների» գեկուցման մէջ, անդրադառնալով Ժ.-ԺԴ. դարերի պատմական սկզբնաղբիւրներին, վկայութիւններ է բերում պատմիչներ Կիրակոս Գանձակեցուց, Մատթէոս Ուռհայեցուց եւ Ալիքար Այրիվանեցուց, որոնք Անին ամուսնում են «նազար ու մկ եկեղեցիների քաղաք»: Պատմական երկերի ժառ տեղեկութիւններին հետազօտողն հակադրում է եկեղեցիների կառուցման մասին վիճակն արձանագրութիւնների առատութիւնը: Հեղինակը բարձր է գնահատում Օրբելու դերը Անիի վիճագիր արձանագրութիւնները հաւաքելու եւ ընթերցելու գործում, յիշատակելով նաև միւս նրախտատրների, յատկապէս Կարապետ Բասմաջեանի դերը: Այնուհետև, Ուլտիոջեանը ներկայացնում է Անիի կարողիկէի, Գազկաշէնի, Արուղամբեց, Տիգրան Հոնենց, Աբրունիքի, Սարկաւազ Երեցի, Ս. Աստուածածնի, Ջաքարէ Ջաքարեանի, Ուրան Ջարեմատիմի եւ այլ եկեղեցիների շինարարական վիճագիր արձանագրութիւնները եւ կարեւորում դրանց յետագայ հետազօտութիւնն ու նորերի յայտնաբերումը:

Յրանսիահայ արուեստարան Պատրիկ Տօնապետեանն իր «Տրդատ Ճարտարապետը» հետազօտութիւնը նուիրել է Անիի ամենամշանուող ճարտարապետ Տրդատին, յիշատակելով նրա մասին լոյս տեսած հիմնական ուսումնասիրութիւնները: Հեղինակն սկզբում անդրադառնում է հաստատարար Տրդատի կողմից կառուցուած շինութիւններին՝ Արգինայի եւ Անիի կարողիկէներին, Կ. Պոլսի Ս. Սոփիայի տաճարին, Գազկաշէնին եւ միայն ապա՝ նրան վերագրուած կառույցներին՝ Անիի արքունական պալատին եւ նրա հիւսիս-արեւելեան սենեակին, Արգինայի կարողիկոսական մտավայրին ու եկեղեցիներին, Հաղբատի եկեղեցուն, Սմբատ թագաւորի պարսպին, Մարմաշէնի գլխատր եւ Անիի Ս. Փրկչի եկեղեցիներին: Եթէ Տրդատի կողմից հաստատարար կառուցուած եկեղեցիները թուագրում են 973-1001 թուականներով, ապա նրան վերագրուածները թուագրում են 960-1036 թուականներով: Այդ իսկ պատճառով, կարծում ենք շատ զգուշ պէտք է լինել, յատկապէս ԺԱ. դարով թուագրուող յուշարձանները նրան վերագրելու խնդրում:

Արեւմտեան Լուս Անջելէսի Վարձարանի դասախօս Ալիս Թէլլորի թեման է «Անիի Պարիսպները. Նրանց Գործնական Նշանակութիւնը»: Հեղինակը դիտարկում է միջնադարեան պարսպի դերը եւ նշանակութիւնը մի քանի տեսակետից՝ իբրև շրջակայքի վերահսկող, արուեստի գործ, արքայական իշխանու-

քեան ու հզօրութեան խորհրդանիշ: Հեղինակն, յիշով արեւմտաեւրոպական, յատկապէս՝ անգլիական միջնադարեան ամրոցներին վերաբերող գրականութիւնը, գալիս է այն հզօրակցութեան, որ Անիի պարիսպները եւ ատաօքին հերքին ունէին սիմվոլիկ նշանակութիւն եւ հաւաստում էին Բագրատունեաց բազալտութեան հզօրութիւնը: Հեղինակն Անիի պարսպի հետ զուգահեռներ է անցկացնում, համեմատելով այն նախաարարական շրջանի Հայաստանի ամրոցների, ինչպէս նաեւ Լոսիի եւ Կիլիկիայի ամրոցների հետ, յատկապէս Թեոդոսուպոլսի (Կարնոյ), Դոիմի եւ Կ. Պոլսի կրկնակի պարսպի հետ, որն էլ մնանակում էր իբրեւ քրիստոնէութեան մայրաքաղաք:

Արտեստաբան Արմեն Ջարեանի «Գեոմետրիա Անին» զեկուցման մէջ քաղաքաշինութեան իւրայատկութիւններից է համարում զեոմետրիա քաղաքի գոյութիւնը, որը նախատեսուած է եղել արհեստա-աշխատատրական դասակարգի համար: Ըստ հեղինակի, այդ բնակարաններում ապրել է քաղաքի 100,000 բնակչութեան երկու տոկոսը՝ շուրջ 2000 մարդ: Հեղինակն, յենուելով Մատի անիական արշաւների մասնակից Դ. Կիպչիճէի հետազօտած միւրի վրայ, անդրադառնում է Ծաղկոցածորի 16 աղանաւտների, Իգածորի դամբարան-եկեղեցիների, Ծաղկոցածորի եւ Գալլաձորի եկեղեցիների եւ երկիկատր շինութիւնների մարտարապետական իւրայատկութիւններին:

Հելեն Էվանսը «Անին եւ Գագիկ Կարսեցու Անեսարանը» զեկուցման մէջ համեմատում է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու որմնակարները յիշատակուած ձեռագրի մանրանկարների հետ: Հեղինակը փորձում է գտնել ձեռագրեր, որոնք ժամանակով եւ հետադարձութեամբ մտն են Անիի կարողիկէին ու Ս. Գրիգոր Եկեղեցուն, եւ մատնանշում է արտեստաբան Տատիանա Իզմայլովայի կողմից շրջանառութեան մէջ դրուած, Մաշտոցի ամուսն Մատեմադարանում պահուող Բագրատունեաց դարաշրջանի երեք մատնանկարը՝ հ. 3796 (1056 թուական), հ. 1009 (1060 թուական) եւ հ. 7736 «Մուլնու Անեսարանը» (ԺԱ. դար): Էվանսի այն միտքը թէ Անիում գրուած ձեռագրեր չկան՝ ամբողջովին հերքուած է Մաթեոսեանի վերոյիշեալ մեմագրութեան մէջ: Էվանսը մանրամասնօրէն ներկայացնում է նաեւ Երուսաղէմի հ. 2556 մատնանկար, որ Սիրարփի Տէր-Ներսէսեանի կողմից թուագրուել է 1045-54ի միջեւ եւ վերագրում է Գագիկ Կարսեցուն: Էվանսը գտնում է, որ Տիգրան Հոննեցի եւ Անիի այլ եկեղեցիների որմնարանդակները ազդեցութիւնն են կրել Անիի նախասելջուկեան շրջանի, յատկապէս՝ քիզանդական որմնակարչութեան եւ մանրանկարչութեան:

Սամկու-Պետրերուզի Էրմիտաժ քանդաւանի գիտական աշխատակից Ալվիդա Միրզոյեանի «Անիից եւ Հայաստանի Այլ Վայրերից Ցայտնաբերուած Բրոնզէ Բուրվառների Ծագումը եւ Թուագրումը» յօդուածը նուիրում է Պատմական Հայաստանի տարածքում յայտնաբերուած 13 բուրվառների գիտական նկարագրութեանն ու արտեստաբանական ջննութեանը: Հեղինակը միմեանց հետ համեմատելով Հայաստանի Պատմութեան Պետական (ՀՊՊԹ), Գիւմրիի, Ղափանի Երկրագիտական քանդաւաններում եւ Էրմիտաժում պահպանուող նմըշները, դրանց պատկերագրութիւնը ջննելով աշխարհի միւս քանդաւաններում պահպանուող նոյնատիպ առարկաների դաջուածքների հետ, հետեւելով Յովսէփեանին ու Յարութիւն Քիրտեանին, եկել է այն համոզման, որ դրանց մեծ մասը Թ.-ԺԳ. դարերում Ատրիք-Պաղեստինից ներկրուել են Հայաստան,

յակ ՀՊՊԹի հ. 1265 ու Ղափանի բանգարանի մնույթները՝ ներկրում բուրվա-  
ների հայ վարպետների ընդօրինակած պատճեններ են: Հեղինակը ներկրում  
է հասարում նաև ՀՊՊԹի հ.հ. 1465 և 1465b մնույթները, որոնք գտնուել են Ա-  
նիի Գազկալէն եկեղեցում: Հեղինակի նպատակն է եղել մերժել Ն. Գ. Յակոբ-  
եանի, Ի. Գ. Ղարիբեանի և Հ. Ա. Մելքոնեանի *Բանբեր Երեւանի Համալսարա-  
նի* հանդէսի 1988ի հ. 1 (64), էջ 110-120ում լոյս տեսած «Միջնադարեան Հայաս-  
տանի խնկամանները» յօդուածի դրոյթները, ըստ որոնց բուրվաւորն ունեն  
հայ արուեստին բնորոշ առանձնապատկութիւններ և հաւանաբար Հայաստա-  
նում դրանց պատրաստման կենտրոններն են եղել Անիւն և Տաթևը: Ինչեւէ,  
հարցի հետազոտութիւնը քանակի՞նք փուլն է մտել և կարծում ենք մօտակայ  
ժամանակներում հնագէտ միջնադարագէտները մախանձախնդիր կը լինեն  
նրից ամբողջական դասակարգմանն ու համակողմանի քննութեանը:

Ճարտարապետ Պաօլօ Կունեոյի հրապարակումն ունի «Անիի Հնագիտա-  
կան Տեղանքի Գիտական Հետազոտութեան Պատմական Ուրուագիծ Եւ Մի-  
ջազգային Հնագիտական Արգելոցի Ստեղծման Նախագծի Առաջարկ» վերնա-  
գիրը: Հեղինակը քարտեզների միջոցով ճշգրտում է Անի-Երեբոք հնագիտա-  
կան արգելոցի տարածքը, քննարկում է Թուրքիայի և Հայաստանի տարածք-  
ներից առանձին հողակտորի առանձնացման հարցը և Անիի հնագիտական  
միջազգային արգելոց ստեղծելու գաղափարը: Նման հիմնաւորման փաստարկ  
են ծառայում Անի մայրաքաղաքի առեւտրական և մշակութային առնչութիւն-  
ները արեւելքի և արեւմտքի քաղաքակրթութիւնների հետ, իբրև սելջուկ-մու-  
սուլմանական և քրիստոնէական ճարտարապետութիւնների մերձեցման գօ-  
տի, Անիւն իբրև ժամանական և գորական ճարտարապետական դպրոցների  
հետազօտման նախատիպ: Կունեոն պնդում է, որ մնան արգելոցի ստեղծումը  
տեղի է կարեւորում նրանով, որ տարածքում տեղի են ունենում հզօր երկրա-  
շարժեր, որոնց աւերների վերացմանը զօրու չեն ոչ Թուրքիան, ոչ էլ Հայաստա-  
նը: Կունեոն միջազգային արգելոցի ծրագրերի մէջ է մտցնում հնագիտական  
պեղումները, որոնք պիտի կատարուեն բուրքական կողմի հետ համագործակ-  
ցութեամբ, քանի որ Թուրքիայում էլ վերջին տարիներին աճող հետաքրքրու-  
թիւն է արձանագրում յիշեալ յուշարձանի նկատմամբ: Հեղինակն յատկապէս  
շեշտում է Անկարայի Հաջեթթեյի Համալսարանի պրոֆեսոր Բ. Կարամուզար-  
լիի գործունէութիւնը: Միջազգային հնագիտական արգելոցի աշխատանքները,  
ըստ նրա ծրագրի, պիտի վերահսկի հայկական ճարտարապետական ուսում-  
նասիրութիւնների Հռոմի կենտրոնը:

Պիտեր Քաուլին «Անիի Պահպանութեան Հիմնախնդիրները» յօդուածում  
բարձր գնահատելով պատմամշակութային յուշարձան Անիի նշանակութիւնը,  
թուարկում է այն գործօնները, որոնց ազդեցութեան տակ դարերի ընթացքում  
քաղաքը վերածուել է անբնակ աւերակների: Դրանց մէջ նա յիշատակում է կլի-  
մայական հակոտնեանները (շոգ-ցուրտ, խոնաւութիւն-չորութիւն, լոյս-մութ եւն.),  
կենսաբանական գործօնները (կենդանիներ, միջատներ, բոյսեր, սնկեր և  
դրանց արտաթորանքը), երկրաշարժերը (վերջին հազարամեակում տարածա-  
շրջանը տեսել է 6 երկրաշարժ, որոնցից հզօրագոյնը 1988ի Դեկտեմբերի 7ին  
է), պատերազմական ռազմարշաւները և դարերի ընթացքում տեղի ունեցած  
թալանը: Ցատկապէս աներիչ է եղել մօտակայ բնակավայրերի կողմից Անիի ա-

ներակների օգտագործումն իրեն քարհանք: Այդ վիճակին վերջ է տրուել միայն 1963ին, երբ թուրքական կառավարությունը քաղաքն հռչակել է զբոսաշրջության գօտի: Այս քայլն ամրապնդուել է 1985ի Հոկտեմբերի 3ին, երբ Թուրքիան ստորագրել է Երախտիրոջի Գրամաղեան Փաստաթուղթը՝ Երուսալի ճարտարապետական ժառանգության պաշտպանության ակտը, որի շնորհիւ Թուրքիան այդ գործում անմախաղէլ օգնութիւն կարող է ստանալ Նիւ Եորքի, Լուվրի եւ Հռոմի փորձագէտներից: Այս ծրագրի իրականացումը, ասում է Քաւիմ, տարածքը կը դարձնի զբոսաշրջության գօտի, որն էլ կը նպաստի երկրամասի տնտեսական բարգաւաճմանը: Հեղինակն շահագրգորութիւնների մոյն հարթութեան վրայ է դնում Աղթամարի, Կրեաւէի կնոստեան յուշարձանների, Կ. Պոլսի պարսպի պահպանման հարցերը: Հեղինակը շօշափում է նաեւ արգելոցի պահպանման ֆինանսական աղբիւրների գտնման, որոշ յուշարձանների վերականգնման եւ յատկապէս բուրք մասնագէտների կողմից Անիի սելջուկեան ճարտարապետութեան հետազօտութեան կարեւորութիւնը:

Ռամսելէի Պաշտօնի միջոցով Ինտերնատից Վազգէն Քարսեղեանի «Անիի Պահպանութիւնը» հրատարակման մէջ, հեղինակը իրերը դիտում է 1915ի Մեծ Եղեռնի միջազգային ճանաչման տեսանկիւնից, Անին դիտելով մշակութային ժառանգութեան այն յուշարձաններից մէկը, որը միջազգային հանրութեան կողմից արժանի է յատուկ հոգածութեան: Անիի եւ Թուրքիայի միւս հայկական յուշարձանների պաշտպանութիւնը պիտի հովանաւորուի Միաւորում Ազգերի կրթութեան, Գիտութեան եւ Մշակոյթի Կազմակերպութեան (United Nations Educational, Scientific and Cultural Organization; UNESCO), Յուշարձանների եւ Հնագիտական Վայրերի Միջազգային Խորհրդի (International Council on Monuments and Sites; ICOMOS) եւ Մշակութային Մեխակնութեան Պահպանման ու Վերականգնման Ռաւմնասիոյութեան Միջազգային Կենտրոնի (International Centre for the Study of the Preservation and Restoration of Cultural Property; ICCROM) կողմից: Հեղինակը շեշտում է, որ այդ յուշարձանների ուսումնասիրութեան գործում յատկապէս մեծ պիտի լինի հայաստանեան մասնագէտների ներդրումը: Այդ գործում նրանք պէտք է համագործակցեն թուրք պաշտօնեաների եւ մատուրականների հետ:

Չնայած ժողովածուի տասներեքամայ յավաղմանը, կարծում ենք այս հրատարակումը ուշացած չէ եւ միջազգային գիտական շրջանակների ուշադրութիւնը եւս մէկ անգամ կը սեւեռի հայոց ճարտարապետութեան այս գոնարի հետազօտութեան խնդիրների շուրջ, իսկ հայագիտութիւնը ստեղծի համակարգուած մօտեցում ցոյց կը բերի Անի մայրաքաղաքի պատմամշակութային ժառանգութեան ուսումնասիրութեան հարցերում:

ԱԶԱՏ ԲՈՋՈՅԵԱՆ

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Քաղաւտումների մայրաքաղաքն իրեն հնագիտական պեղումների վայր դնեաւ 1860ականներին մասնագոյց էր արել ֆրանսիացի նշանաւոր կովկասագէտ Մարի-Ֆելիսիտ Բրոսէն, տե՛ս՝ M.-F. Brosset, *Les Ruines d'Ani, capitale d'Arménie sous les Bagratides aux X et XI s.: histoire et descriptions*, p. I-II, Saint-Petersbourg, 1860-61: Ռու-

սական Գիտությունների Ակադեմիայի ակադեմիկոս Նիկողայոս Մառի և նրա աշակերտների 1892-93ին և 1904-17ին ձեռնարկած հնագիտական հետազոտությունները դադարեցուցեցին Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ, որից յետոյ փակուցեց նաև Անիի Գիտահետազոտական Ինստիտուտ-Թանգարանը: Այդ հաստատության գրադարանը և հնագիտական առարկաները փոխադրուցեցին Ռուսաստան և դեռևս չբացայայտուած պարագաներում անհետացան հաւանաբար Վրաստանի կամ Հուսիսային Կովկասի տարածքում: Յիշատակուած պեղումների արդիւնքները՝ բացի ռուսական գիտական մամուլում հրատարակուած քաղաքի յօդուածներից և Անիի քանդարանի լռյա տեսած պրակներից, ամփոփուցեցին Մառի *Ani: Knizhnaia istoria goroda i razkopki na meste gorodishcha* [Անի. Քաղաքի Գրքային Պատմութիւնն Ու Աւերակ Քաղաքի Պեղումները] (Մոսկուա և Լենինգրադ, 1934) մեծագորքիւմում, որը դարձաւ ամուսնի գիտնականի կարապի երգը: Դրանից յետոյ, Անիի բնձատկւած երկար ժամանակ դարձաւ հիմնականում հայալիզու հայագիտութեան մեծաշնորհը: Միայն 1984ին շարժուց սառոյցը, երբ Պաօլօ Կոմնեօ, Արմէն Ջարեանը, Գարրիելլա Ուլուիջեանը, Նիկոլ և Ժան-Միշէլ Տիերրիները և ուրիշներ համատեղ ջանքերով Միլանոյում հրատարակեցին *Documenti di Architettura Armena* [Հայ Շարտարապետութեան Վաներագրեր] շարքի 12րդ հատորը, որն ամբողջութիւն մտքիւմ էր Անիին: Անա այս քայլից յետոյ միայն վերահիմաստադրուց Անիի նշանակութիւնը համաշխարհային քաղաքակրթութեան համար և սկսուց մատարական շարժում Անի գիտութեանը և համաշխարհային մշակութիւն վերադարձնելու համար: Այս շարժումն արթնացնելու գործում իր ուղղոյն լուծում է ունեցել նաև 1989ի Հոկտեմբերին հրատիրուած գիտաժողովը:

<sup>2</sup> *Ani: capitale de l'Arménie en l'an mil, ouvrage réalisé sous la direction de Raymond H. Kévorkian, Paris: Musées, Pavillon des Arts, 7 février-13 mai 2001: Եռյն քուսկանին, ֆրանսերէն քարգմանութեամբ հրատարակուց նաև Մառի Անի մեծագորքիւնը՝ N. Y. Marr, *Ani, Réve d'Arménie*, traduit du russe par Aida Tcharkhichian, Paris, Anagramme Editions, 2001.*

<sup>3</sup> Պէտք է նշել, որ ժողովածուի մէջ, որի ք՛ հեղինակները, ք՛ հիմնական ընթերցողները հայազեաներ են, ողջ հայերէն գրականութիւնը յղուած է յիշեալ գրադարձութեանը: Մեր կարծիքով, գրադարձութիւնից կարելի է օգտուել միայն հայերէնից կատարուող քարգմանութիւնների ժամանակ, երբ հարկ է առաջանում քարգմանուող լեզուին փոխանցել հայերէնի հնչիւնական իրադատութիւնները: Այս առումով պէտք է հետեւել դասական քանակիրութեան, քիզանդակութեան և երբայագիտութեան յայտուայ սկզբունքներին: Այսպէս, քիզանդակութեան հանդէսները, յատկապէս՝ *Byzantinische Zeitschrift, Revue des études byzantines, Byzantino-slavica* և ուրիշներ, յոմարէն գրականութիւնը յղում են յունական տառատեսակներով և որով տառադարձման օգնութեան չեն դիմում:

<sup>4</sup> Այստեղ առկայ են որոշ ամճշտութիւններ: Մասքեա Ուռնայեցիին յիշատակում է իբրև ժԱ. դարի հեղինակ: Եղիշէ պարագային, հեղինակը հետեւում է նրան ո՛չ ք՛ Ե., այլ Ձ. դարում տեղադրող տեսակետին, որ հայագիտութեան մէջ փոքրամասնական և ըստ մեզ անճշտ կարծիք է: